ԷԼԻ ՖՈՐ

ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հին աշխարհի արվեստ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1909

Արվեստը, որ արտահայտում է կյանքը, նրա նման խորհրդավոր է։ Նրա նման էլ խույս է տալիս ամեն բանաձևումից։ Բայց արվեստը բնորոշելու այդ պահանջը հետապնդում է մեզ, քանզի միահյուսվում է մեր առօրյա կյանքի բոլոր պահերին՝ նրա դրսևորումները իր ամենավսեմ ձևերով փառաբանելու և ամենաչնչին ձևերով պախարակելու համար։ Ինչպիսին էլ լինի ունկնդրելու կամ դիտելու համար ջանք գործադրելու մեր դժկամությունը, անհնարին է, որ չլսենք կամ չտեսնենք, կամ միանգամայն հրաժարվենք երևույթների աշխարհի մասին կարծիք կազմելուց, աշխարհ, որի իմաստը հենց բացահայտելու առաքելությունն ունի արվեստը։ Պատմաբանները, բարոյագետները, կենսաբանները, մետաֆիզիկները, – բոլոր նրանք, ովքեր կյանքի առջև դրել են նրա ծագման ու նպատակի գաղտնիքի հարցը, վաղ թե ուշ հանգել են պարզաբանման ենթակա այս մտքին. ինչու՞ ենք ինքներս մեզ տեսնում կյանքն արտացոլող ստեղծագործություններում։ Սակայն նրանք ստիպում են սահմանափակել մեր աշխարհընկալումը պոեմի հարափոփոխ անհունության մեջ մտնելիս, պոեմ, որ երգում է մարդը, մոռանում, վերստին երգում ու մոռանում, քանի դեռ մարդ է՝ կենսաբանական, մետաֆիզիկական, բարոյական, պատմական խիստ նեղ շրջանակների չափով։ Ընդ որում, գեղեցիկի զգացողությունը առնչվում է միաժամանակ այս բոլոր ուսմունքներին և, անտարակույս, գերիշխում նրանց վրա՝ տանելով դեպի մարդկային ամեն գործունեության հնարավոր ու բաղձալի միասնականություն՝ իրագործելի միայն իր կողմից։

Լոկ մեր սրտի ձայնին ականջալուր կարող ենք խոսել արվեստի մասին, առանց նսեմացնելու այն։ Ամենքս մեր մեջ կրում ենք ճշմարտության մեր բաժինը, բայց կմնանք դրան անտեղյակ, եթե չունենանք այդ ճշմարտությունը որոնելու կրքոտ ցանկություն, եթե չզգանք այն ասելու որևէ ոգևորություն։ Նա, ով թույլ է տալիս, որ իր հոգում հնչեն աստվածային ձայներ, միայն նա գիտե արժևորել ստեղծագործության խորհուրդը, ստեղծագործություն, որից քաղել է մյուս մարդկանց հետ իր հույզը կիսելու պահանջը։ Միշլեն չդավաճանեց գոթական մշակներին կամ Միքելանջելոյին, որովհետև տաճարների նավեր վեր հանող կամ Սիքստինյանի կամարների վրա փոթորիկ բարձրացնող կիրքը հոշոտում էր նրան։ Բոդլերը թափանցեց մինչև մարդկային սրտի ատրուշանը, որտեղից ուժգին ու լուսապայծառ ճառագում էր հերոսների ոգին, որովհետև մեծ բանաստեղծ է։ Տենի գաղափարները չմեռան իր հետ, որովհետև արվեստագետի նրա խառնվածքը գերազանցում է իր կամքը, իսկ դոգմատիկ կարծրությունը անդադար ողողվում է զգայությունների և պատկերների մշտանորոգ ալիքով։

Արվեստը եկավ այն ժամանակ, երբ սկսել էինք հասկանալ, որ մեր սեփական ճակատագիրը կապված է մեր նախորդների ճանապարհի, նույնիսկ այն երկրի կառուցվածքի հետ, ուր ծնվել ենք։ Նրան իրավունք էր վերապահված տեսնելու, թե պատմության կաղապարից ինչպես է ձերբազատվում մեր միտքը։ «Արվեստն ամփոփում է կյանքը»։ Այն ներթափանցում է մեր մեջ հողերի ուժի, երկինքների գույնի հետ, իրեն բնորոշող առհավական նախապատրաստությունների և իր բնորոշած մարդկային կրքերի ու ցանկությունների միջով։ Մեր գաղափարներն արտահայտելու համար մենք գործածում ենք այն նյութերը, որ ընկալում է մեր աչքը և շոշափում է մեր ձեռքը։ Անհնարին է, որ Ֆիդիասն ու Ռեմբրանդտը՝ հարավի լույսի, վառվռուն աշխարհի մեջ ապրած քանդակագործը և հյուսիսի մշուշների ծուփ տվող աշխարհի մեջ կյանքն անցկացրած գեղանկարիչը, այս երկուսը, որոնց բաժանում է երկու հազարամյակ, – իսկ այդ ընթացքում մարդկությունն ապրել է, մաքառել և ծերացել, –

օգտվեին միևնույն բառերից… Բայց անհրաժեշտ է, որ ինքներս մեզ ճանաչենք ինչպես Ռեմբրանդտի, այնպես էլ Ֆիդիասի մեջ։

Մեր լեզուն, միմիայն մեր լեզուն է շրջապատից վերցնում և պահպանում մեր զգայարանների անմիջականորեն ընկալած երևույթը։ Արվեստից մենք կպահանջեինք միայն ուսուցանել պատմություն, եթե այն լիներ սոսկ ամպերի գետնատարած ստվերի նման անցած հասարակարգերի արտացոլք։

Բայց նա մեզ պատմում է մարդու մասին և նրա միջոցով՝ տիեզերքի։ Նա գերազանցում է պահը, ընդարձակում վայրը մարդկային ողջ գոյության ու ըմբռնողության, տիեզերական ողջ ժամանակի ու տարածության սահմաններով մեկ։ Այն ամրակայում է հարափոփոխ հավերժությունը՝ անցողիկ ձևի մեջ։

Մեզ պատմելով մարդու մասին՝ արվեստը ուսուցանում է հենց մեզ։ Տարօրինակն այն է, որ ասելիքի այդ պահանջը միշտ կա։ Տոլստոյի գիրքը* այլ բան չի էլ նշանակում։ Այն մեջտեղ եկավ օրհասական ժամին, երբ մենք հարցադրումներով զինված, բայց նրա բացած հորիզոնների առջև շվարած և մեր ցաքուցրիվ ջանքը նշմարած՝ փորձում ենք բաղդատել ձեռք բերված արդյունքները, որպեսզի միավորվենք համընդհանուր հավատքով և քայլենք առջևից։ Մենք մտածում ենք, հավատում ենք, որովհետև մտածելու, հավատալու կարիքն ունենք։ Մեր ողջ պատմության ընթացքում հենց սա է դառնում մեր մտքերի և հավատալիքների համար մարդասիրության անխորտակելի հիմք։ Տոլստոյն ասաց այն, ինչ անհրաժեշտ էր ասել տվյալ պահին։

Արվեստը կանչ է՝ ուղղված մարդկային հանրությանը։ Մենք ճանաչում ենք միմյանց մեր մեջ նրա արթնացրած արձագանքներով ու դրանք խանդավառությամբ փոխանցում մեզ նմաններին։ Այդ արձագանքները որպես իրական ներգործություն հնչում են սերունդների ողջ գոյության ընթացքում, ինչի մասին նրանք երբեմն չեն էլ կասկածում։ Անըմբռնողության և համընդհանուր անկման ժամանակներում այդ կանչը լսում են միայն մեզնից ոմանք, որովհետև նման ժամանակներում նրանք են իդեալիստական այն թռիչքի կրողները, որ շունչ ու ոգի է տալու բազմությունների մեջ նիրհող հերոսությանը։ Ասում են՝ արվեստագետը բավարարվում է ինքն իրենով։ Ճիշտ

չէ։ Այդպես մտածող արվեստագետի մեջ իշխում է գոռոզամտությունը։ Դրան հավատացող արվեստագետը արվեստագետ չէ։ Եթե նա չունենար այդ ամենաընդհանրական լեզվի կարիքը, չէր ստեղծի այն. մի ամայի կղզում հող կփորեր և իր ցորենը կաճեցներ։ Ոչ ոք այնքան կարիք չունի մարդկանց ներկայության ու քաջալերանքի, որքան նա։ Նա խոսում է, քանզի զգում է՝ շուրջը մարդիկ կան, խոսում է հաճախ թևաթափ, բայց երբեք չմարող հույսով, թե ի վերջո կլսեն իրեն։ Նրա հիմնական խնդիրն է՝ սփռել իր էությունը, իր կյանքից բոլոր մյուս կյանքերին տալ ամենայն հնարավորը, նրանցից պահանջել նույնը և նրանց հետ անմեկնելի ու հոյակապ համագործակցությամբ ստեղծել խիստ հուզիչ մի ներդաշնակություն՝ հարստացած մյուս կյանքերի մասնակցությամբ։ Արվեստագետը, որին մարդիկ տալիս են ամեն ինչ, նրանց է վերադարձնում իր վերցրածը։

Ոչինչ մեզ չի հուզում՝ մեզ պատահած կամ պատահելիք դեպքերից զատ։ Արվեստագետը հենց մենք ինքներս ենք։ Նա իր ետևում ունի ոգեշունչ կամ թշվառ մարդկության նույն խորխորատները, շուրջը՝ իր յուրաքանչյուր քայլից ծավալվող նույն գաղտնախորհուրդ բնությունը։ Արվեստագետը բազմությունն է, որին պատկանում ենք բոլորս. նա բնութագրում է մեզ մեր իսկ համաձայնությամբ կամ հակառակ մեր ընդվզման։ Նա ի զորու չէ հավաքելու այն տան քարերը, որ կուրծքը ջարդելու, մատները քրքրելու վտանգը աչքն առած՝ կառուցում է մեզ համար՝ կողքեկողք անցնող, բայց մեր ճանապարհից տարբեր մի այլ ճանապարհի վրա։ Արվեստագետը պետք է տառապի մեր ցավերով, մենք պիտի տանջենք ու չարչարենք նրան։ Նա պիտի զգա մեր ուրախությունն ու հրճվանքը, իր բերկրությունը քաղի մեզնից։ Նա պիտի ապրի մեր վշտերն ու ներքին հաղթանակները, նույնիսկ այն ժամանակ, երբ մենք դա չենք զգում։

Արվեստագետը կարող է զգալ իր միջավայրը և իշխել նրա վրա միայն այն դեպքում, երբ այդ միջավայրը կդիտի իբրև ստեղծագործական միջոց։ Միայն այդ ժամանակ նա մեզ տեր կդարձնի այն հարակա ռեալություններին, որ դեպքերն ու ժամանակը բացահայտում են նրանց համար, ովքեր գիտեն տեսնել դրանք և ապրել դրանցով։ Այդ

ռեալություններն ապրում են մարդկային հասարակարգերից ավելի երկար, ինչպես ծովը՝ իր ծփանքից։ Արվեստը միշտ «հարաբերությունների համակարգ» է և սինթետիկ համակարգ, նույնիսկ պրիմիտիվ արվեստը, որ մանրամասնությունների անձանձիր կույտի մեջ անգամ կրքոտորեն հետամուտ է հիմնական տրամադրության։ Ըստ էության, ամեն պատկեր զգայությունների և ձևերի անեզրական աշխարհի մասին արվեստագետի կազմած գաղափարի խորհրդանշական ամփոփումն է, իր բացահայտած կարգուկանոնը այնտեղ հաստատելու ցանկության արտահայտությունը։ Արվեստն իր ամենահամեստ սկզբնավորումից ի վեր եղել է հատուկենտ մարդկանց նախազգացումների՝ բոլորի պահանջներին համապատասխանող իրականացում։ Նա պարտադրել է աշխարհին հաձնել իրեն այն օրենքները, որոնք թույլատրել են մեզ աշխարհում աստիճանաբար հաստատել մեր ոգու թագավորությունը։ Բխելով մարդկությունից՝ նա մարդկությանը բացահայտեց սեփական մտածելակերպը, բնորոշեց ցեղերին, դարձավ նրանց դրամատիկ տքնության միակ վկայությունը։ Եթե ուզում ենք իմանալ, թե ինչ ենք մենք, պիտի հասկանանք, թե ինչ է արվեստը։

Նա է խորախորին ինչ-ինչ ռեալությունների սկզբնավորողը, իսկ այդ ռեալությունների վերջնական հաստատումը, եթե չսպանի շարժումն ու դրանով նաև հույսը, մարդկությանը թույլ կտա իր մեջ և իր շուրջ ստեղծելու բարձրագույն ներդաշնակություն, ինչը նրա տքնության անհասանելի նպատակն է։ Արվեստն, անշուշտ, անհամեմատ ավելի մեծ բան է, քան պատկերացնում են դրանից գլուխ չհանողները, թերևս առավել գործնական բան, քան կարծում են արվեստի ազդեցության ուժն իրենց վրա զգացած շատերը։ Մեր զգայությունների ու փորձառությունների միությունից ծնված՝ մեզ իսկ նվաձելու համար, արվեստը համենայն դեպս ոչինչ չունի այն անշահախնդիր, հաձելի զբաղմունքից, որով Կանտը, Սպենսերը և հենց Գյույոն փորձեցին սահմանափակել նրա դերը։ Աշխարհի բոլոր պատկերները մեզ համար պիտանի գործիքներ են, և արվեստի երկը մեզ գրավում է սոսկ այն պատճառով, որ նրա մեջ ճանաչում ենք մեր բանաձևված ցանկությունը։

Մենք սիրով ենք խոստովանում, որ առաջին անհրաժեշտության առարկաները՝ հագուստները, կահույքը, տրանսպորտային միջոցները, ճանապարհները, տները մեզ թվում են գեղեցիկ, երբ իրենց դերը կատարում են ճշգրտորեն։ Բայց մենք համառորեն վեր, այսինքն՝ բնությունից դուրս ենք դասում բարձրագույն օրգանները, որոնց միջոցով այն մեզ համար իսկ առավել հետաքրքրությամբ երևան է հանում մեր մարմինը, դեմքը, միտքը, գաղափարների, կրքերի, բնապատկերների անհուն աշխարհը, ուր ապրում են դրանք, բնորոշում նույն աշխարհը, իսկ այդ աշխարհն էլ բնորոշում է դրանք, և մենք չենք կարող տարանջատել այս ամենը։ Գյույոն շատ հեռու չէր գնում, երբ ինքն իրեն հարց էր տալիս, թե ամենապիտանի գործն արդյո՞ք ամենագեղեցիկ գործը չէ. վճռական բառի առջև նրա հետ ընկրկում ենք և մենք, ասես այդ բառը սպանելու է մեր երազը, թեև գիտենք, որ այն հավերժական է, քանզի երբեք չենք հասնելու մեր ինքնաիրականացմանը, որին հետամուտ ենք անվերջ։ Սակայն այդ բառն արտասանվեց, և արտասանեց նա, ում բանականությունը թերևս ամենաձերբազատվածն էր նյութեղեն ամեն խոչընդոտից։ «Մի՞թե գեղեցիկ մարմնի ֆունկցիան, նրա օգտակարությունը, – ասում էր Պլատոնը, – մեզ չեն ապացուցում, որ այն գեղեցիկ է։ Այն ամենը, ինչ գեղեցիկ ենք համարում՝ դեմքերը, գույները, հնչյունները, արհեստները, – այս ամենը մի՞թե այնքան ավելի գեղեցիկ չէ, որքան ավելի օգտակար է։»

Թող մեր իդեալիզմը հանգիստ մնա իր տեղում… Հույզերի ու ցանկությունների երկարատև կուտակմամբ մարդն իր ճանապարհին կարողացավ ճանաչել իրեն պիտանի ձևերը։ Ոմանց կատարած այս միակ ընտրությունն էլ ապագայում պիտի որոշեր, թե բազմությունների բնազդի մեջ ինչն է հայեցողության ոլորտից անցնելու գործնական ոլորտ։ Մեր ընդհանուր զարգացումը, մեր բանականության ու ցանկությունների դժվարին ու աստիճանական բյուրեղացումը ստեղծում են, անհրաժեշտ դարձնում քաղաքակրթության ձևերը, որոնք պոզիտիվիստների համար արտահայտվում են նրանց նյութական բոլոր կարիքների անմիջական ու հեշտ բավարարումով։ Մարդու համար ամենապիտանի բանը գաղափարն է։

Գեղեցիկ ձևը, լինի ծառ թե գետ, կնոջ ստինք թե կող, տղամարդու ուս թե ձեռք, կամ աստծո գլուխ, իր ֆունկցիային համապատասխանող ձևն է։ Գաղափարը ձևը սահմանելուց բացի այլ դեր չունի։ Գաղափարը բարձրագույն կերպ է, անվերջանալի զարգացում աշխարհում, մեր բնազդների ամենահրամայական ապագա, բնազդներ, որոնք նա ամփոփում է և երևան հանում, ինչպես ծաղիկն ու պտուղն են ամբողջացնում բույսը, շարունակում և հավերժացնում նրան։ Ամեն էակ, նույնիսկ ամենաստորինը, իր երկրային կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ, երբ սիրում է, իր մեջ կրում է աշխարհի ողջ պոեզիան։ Նա, ում կոչում ենք արվեստագետ, այն էակն է, ով իր սրտում համապարփակ կյանքին դեմ հանդիման պահում է սիրո վիճակը։ Անմեկնելի, հրաշալի ձայնը, որ տղամարդուն բացահայտում է կնոջ գեղեցկությունը, կնոջ համար հայտնագործում տղամարդու հմայքը, նրանց մղում բախտորոշ ընտրության՝ իրենց տեսակը հավերժացնելու և կատարելագործելու նըպատակով, անվերջ, անդադար հնչում է արվեստագետի հոգում՝ զորացած ու բազմապատկված նրան շրջապատող ձայների, շշուկների, սոսափների ու ծփյունների միջոցով։ Այդ ձայնը նա լսում է միշտ, ամեն անգամ, երբ խշշում է խոտը, երբ նրա ճանապարհին զորեղ ու պերճագեղ ձևը հաստատում է կյանքը, երբ հետևում է ծառաբնի ու ճյուղերի միջով արմատներից սաղարթը ձգվող ստորերկրյա ավշահյութի հոսքին, երբ նայում է ծովին, որ ալեկոծվում է ասես ի պատասխան իր մեջ հոլովվող միլիարդավոր սաղմնային զանգվածների, երբ շոգի կամ անձրևի բեղմնավոր ուժը ողողում է նրան, երբ նախաստեղծ քամիները կրկնում են նրան, թե մարդկային օրհներգերը կազմված են հեշտանքի ու հույսի կանչերից, որոնցով լի է աշխարհը։ Նա որոնում է իր կանխազգացած ձևերը, ինչպես սիրո զոհ դարձած մարդը կամ կենդանին է փնտրում դրանք։ Նա տենչում է մեկ այս, մեկ այն ձևը, անողոք համեմատություններ անցկացնում դրանց միջև, ինչից էլ մի օր ժայթքում է վսեմագույն ձևը. գաղափար, որի հիշողությունը ծանրանալու է նրա սրտին այնքան ժամանակ, քանի դեռ հաղորդակից չի դարձել նրա կյանքին։ Արվեստագետը տառապում է մինչ ի մահ. քանզի ամեն անգամ, երբ կերտել է մի ձև, թև տվել որևէ գաղափարի, մեկ ուրիշ ձևի պատկերն է ծնունդ առել հոգում՝ նրան տանջելու համար,

իսկ բաղձալիին հասնելու անմար հույսը կարող է ծնվել միայն հասած չլինելու հուսախաբությունից։ Նա տառապում է, նրա ամենակուլ տագնապը հաճախ ցավ է պատճառում և իր շրջապատին։ Սակայն նա կարողանում է մխիթարել թե՛ շրջապատին, թե՛ իրենից հիսուն դար հետո ապրող միլիոնավոր մարդկանց։ Նրա թողնելիք պատկերները դառնալու են հարաճուն իշխանության վկայություն նրանց համար, ովքեր կարողանալու են հասկանալ դրանց տրամաբանությունն ու որոշակիությունը։ Անսալով արվեստագետին՝ այդ մարդիկ վայելելու են նրա մի պահ ճաշակած պատրանքը. կատարելապես հարմարվելու հաճախ ահավոր, բայց միշտ ազնվացնող պատրանք։

Սա միակ աստվածային պատրանքն է։ Մենք Աստվածային ենք կոչում այն ձևը, որը լավագույնս է արտահայտում մեր զգայական, բարոյական, անհատական, սոցիալական կամ ցանկացած այլ ձգտումը, կյանքը հասկանալու, ապրելու, մտքի ու սրտի սահմաններն անընդհատ լայնացնելու մեր տարտամ ցանկությունը։ Այդ ձգտումով մենք նվաճում ենք տվյալ ձևը վեր հանող գծերը, ռելիեֆները, ծավալները, և այդ ձևի ու նրա մեջ պտտվող խորախորհուրդ ուժերի հանգուցակետում Աստված բացահայտվում է մեզ։ Ձևը կենդանացնող ոգու խթանից և մեզ շունչ պարգևող ոգուց բխում է կյանքը։ Մենք կկարողանանք դրանից օգտվել, եթե այն լիովին համապատասխանի մեր սեփական գործողությունները թելադրող անմեկնելի գրգիռներին։ Ռոդենը մարմարի կարծրության մեջ տեսնում է ձեռքերն ու ոտքերը միմյանց հանգուցած, գրկախառնված, սերտորեն իրար ձուլված տղամարդու և կնոջ սարսուռը, բայց մենք երբեք չենք հասկանա դրա ահավոր անհրաժեշտությունը, եթե չզգանք, որ ներքին մի ուժ՝ ցանկությունը, իրար է միահյուսել միաձուլված մարմինների սրտերը, միսն ու արյունը։ Կարրիերը սովորական նյութից դուրս է բերում մանկանը կուրծք տվող մոր ֆիգուր, բայց մենք չենք հասկանա այդ միության արժեքը, եթե չզգանք, որ մի ներքին ուժ՝ սերը, մորը մղել է խոնարհելու իրանն ու թեքելու թևը, և մի ուրիշ ներքին ուժ՝ քաղցը, ստիպել է մանկանը փակչել մոր կրծքին։ Ոչինչ չարտահայտող պատկերը գեղեցիկ չէ, և մենք զրկվում ենք ամենագեղեցիկ

զգացմունքից, եթե այն ուղղակիորեն չի բնորոշում այդ զգացմունքն արտահայտող պատկերը։ Ճակտոնները, որմնանկարները, հերոսապատումները, սիմֆոնիաները, ամենավսեմ ճարտարապետական լուծումները, ինքներս մեզ համար կանգնեցրած անհուն ու կենդանի տաճարի ողջ առինքնող ազատությունը, փառքը, անդիմադրելի ուժը այդ խորհրդավոր դաշնության մեջ են։

Ամեն դեպքում, նա բնորոշում է մեր երկար ու ձիգ ճանապարհին թողած վստահության ու հավատի վկայության բոլոր բարձրագույն ձևերը, մեր ողջ իդեալիստական ճիգը, որին չգլխավորեց ոչ մի ֆինալիզմ՝ այս բառին փիլիսոփաների տված «արմատական»** իմաստով։ Մեր իդեալիզմը այլ բան չէ, եթե ոչ մեր ոգու ռեալությունը։ Այն առաջ է գալիս հարմարվելու անհրաժեշտությունից, մնում մեր մեջ՝ բազմապատկվելու և մեր զավակներին փոխանցվելու համար։ Այդ իդեալիզմը ներունակ կերպով ապրում է մեր նախասկզբնական հոգեկան կյանքում, ինչպես ֆիզիկական մարդու մեջ՝ նրա հեռավոր միաբջիջը։ Բացարձակի մեր որոնումը հանգստի անխոնջ ցանկություն է, ինչը կապահովի մեզ համար առաջադիմությանը հակադրվող կույր ուժերի հանդեպ վերջնական հաղթանակ։ Սակայն, մեր առաջ շարժվելու հետ՝ այդ նպատակը հեռանում է հանուն մեր փրկության։ Կյանքի նպատակը ապրելն է, և մեր իդեալը առաջնորդում է մեզ դեպի հարափոփոխ ու մշտանորոգ կյանք։

Երբ հետևում ենք ժամանակի ընթացքին, երբ անցնում ենք մի ժողովրդից մյուսին, այդ իդեալի ձևերը կարծես փոխվում են։ Բայց ըստ էության փոխվում են ժամանակի, ժողովուրդների պահանջները, ժողովուրդներ, որոնց բնության նույնությունն ու օգտակար հատկությունը կարող է երևույթների հոլովույթի միջով ցույց տալ միայն ապագան։ Եգիպտահելլենական աշխարհից հազիվ դուրս եկած՝ ոգու թագավորությունը տարածվում է երկրի երեսին։ Գոթական ու հինդուական տաճարները ջնջում են նրա սահմանները, իսպանացի խեղվածներն ու Հոլանդիայի թշվառները զավթում են այն՝ առանց ներդնելու համամարդկային որևէ տիպար, որով առաջին արվեստագետները բնորոշել են մեր պահանջները։ Սակայն ի՞նչ փույթ։

Այստեղ ևս մարդկային մեծ երազը կարող է ճանաչել իրենից անբաժան հարմարվողականության ճիգը: Ի հայտ են եկել կյանքի այլ պայմաններ. արվեստի զանազան ձևերը մեզ հիշեցնում են դրանք ըմբռնելու անհրաժեշտության մասին, որպեսզի մեր գործունեությունը համապատասխանեցնենք մեր հետաքրքրություններին: Իրական բնապատկերը, ժողովրդական կյանքը, քաղաքային կյանքը շեշտակիորեն բնութագրում են առօրյա կյանքի տարբեր կողմերը, ուր երազից ուժասպառ մեր հոգին ինքնամփոփվում է և վերակերտվում: Նույնիսկ թշվառության և հուսալքության կանչը ստեղծված է բորբոքելու ինքներս մեզ միանալու, ճանաչելու և ավելի հզորանալու տենչը:

Եթե հերթով անդրադառնում ենք եգիպտացիներին կամ ասուրներին, հույներին կամ հինդուներին, միջնադարի ֆրանսիացիներին կամ իտալացիներին, պատճառն այն է, որ պատկանում ենք մերթ այս միջավայրին, մերթ այն դարաշրջանին, նույնիսկ մեր ժամանակի ու կյանքի այս կամ այն պահին, որն ավելի շատ զգում է սրանց, քան մյուսների կարիքը: Երբ մրսում ենք, փնտրում ենք արև, և ստվեր ենք փնտրում, երբ շոգում ենք: Մեզ ձևավորած մեծ քաղաքակրթություններից յուրաքանչյուրը մեր ճանաչողության մեջ ունի իր հավասար բաժինը, քանզի յուրաքանչյուրից հաջորդաբար պահանջել ենք այն, ինչ պակասել է մեզ: Մենք ապրեցինք ավանդույթով, երբ շահագրգռված էինք ապրել դրանով, ընդունեցինք հեղափոխությունը, երբ փրկությունը տեսանք դրա մեջ, իդեալիստներ դարձանք, երբ աշխարհն անձնատուր էր եղել հուսալքության կամ կանխազգում էր նոր ճակատագրեր, եղանք ռեալիստ, երբ աշխարհը կարծես գտել էր իր ժամանակավոր կայունությունը: Մենք ոգեշունչ ցեղերից չպահանջեցինք առավել ինքնակենտրոնացում, ոչ էլ հաշվենկատ ցեղերից՝ առավել եռանդ, որովհետև հասկացանք ինչպես կրքի, այնպես էլ պոզիտիվ մտքի անհրաժեշտությունը: Գրեցինք վիթխարի գիրք, որտեղ Սերվանտեսը պատմեց մեր վեհանձնության և գործնականության մասին: Հետևեցինք մտքի մերթ այս, մերթ այն հզոր ընթացքին և կարողացանք գրեթե նույնարժեք փաստարկներ բերել մեր հակումներն արդարացնելու համար: Այն, ինչ կոչում ենք իդեալիստական կամ

ռեալիստական արվեստ, մեր հավիտենական գործունեության ժամանակավոր դրսևորումներն են։ Մեզ տրված է անմահ պահը որսալու ձիրքը, երբ կյանքի պահպանողական ու հեղափոխական ուժերը միանում են, որ ստեղծեն մարդկային հոգու հավասարակշռություն։

Այսպիսով, ինչպիսին էլ լինի մեզ տրված ձևը՝ իրապես իսկական թե իսկական՝ երևակայության մեջ, հանդես գա անմիջականորեն թե գալիք հնարավոր կերպերի մեջ, առարկան կամ փաստն ինքնին ոչինչ չեն նշանակում։ Դրանք արժևորվում են չափազանց բարդ, բայց և անկրկնելի միջավայրի հետ ունեցած անհամար հարաբերությունների շնորհիվ, որոնք անհուն պարզությամբ արտահայտում են համամարդկային զգացմունքներ։ Որքան էլ համեստ լինի նպատակը, իր նպատակին միտված յուրաքանչյուր դրվագ պիտի իր լուռ արձագանքները տարածի ողջ խորությամբ ու ծավալով։ Նրա զգայական կողմը, ըստ էության, ունի երկրորդական նշանակություն։ «Գեղեցիկ գեղանկարչությունը, – ասում էր Միքելանջելոն, – ինքնին ակնածալի է, քանզի վեհացնում է հոգին թռիչքով, որ հարկավոր է նրան կատարելության հասնելու և Աստծուն միանալու համար։ Գեղեցիկ գեղանկարչությունը այդ աստվածային կատարելության արտացոլանքն է, Աստծո վրձնի ստվերը…» Իդեալիստական է թե ռեալիստական, ժամանակահունչ է թե համընդհանուր՝ արվեստի գործը պիտի ապրի, իսկ ապրելու համար նախ պիտի լինի եզակի։ Եթե ստեղծագործությունը եզակի չէ, մեռնում է ժամանակավրեպ այն էակների պես, որոնց աստիճանաբար բացառում է տեսակը՝ դեպի բարձրակարգություն գնացող իր էվոլյուցիայի ընթացքում։ Եզակի գործը, ընդհակառակը, ապրում է անգամ իր ամենափոքր դրվագի մեջ։ Նույնիսկ ստորգետնյա խոնավությունից կիսաքայքայված մի հին արձանի կրծքավանդակ, ոտք, ձեռք սրսփում է, թվում է տաք, երբ հպվում ես ձեռքով. ասես կենսատու ուժերը նրան դեռ մոդելավորում են ներսից։ Հողից հանված բեկորը շնչում է, ապրում։ Նրանից արյուն է ծորում, ինչպես վերքից։ Դարերի անդունդի վրայով ոգին դարձյալ գտնում է կապը փոշիացած խլյակների հետ, կենդանություն պարգևում ողջ օրգանիզմին, լցնում երևակայական, բայց մեր հուզմունքի համար

առկա կյանքով։ Սա արվեստում մարդկային գործոնի կարևորության հոյակապ վկայություն է, գործոն, որ հողաշերտերի մեջ է դրոշմում մեր մտքի թռիչքը, ինչպես ոսկորներն են թողնում մեր ֆիզիկական օրգանների զարգացման հետքը։ Ամբողջությունը կերտել մտքում և փոխադրել ստեղծագործության մեջ նշանակում է ենթարկվել այն ընդհանուր ու անփոփոխ կանոնին, որ տիեզերքը պարտադրում է մեզ, իսկ գիտնականն արտահայտում է շարունակականության, արվեստագետը՝ ներդաշնակության, արդարը՝ համերաշխության օրենքով։

Մարդկային հարմարվողականության այս երեք գործոնները՝ իրողությունների միջև եղած կապերը բնորոշող գիտությունը, իրողության և մարդու կապերը թելադրող արվեստը և մարդկանց միջև եղած կապերը հետազոտող բարոյագիտությունը, մեր գործածության համար նյութեղեն ու հոգևոր աշխարհի մի ծայրից մյուսը հաստատում են հարաբերությունների մի համակարգ, որի մշտականությունն ու պիտանիությունը վկայելու են տրամաբանության մասին։ Այդ հարաբերությունները մեզ ուսուցանում են ինչն է օգտակար, ինչը՝ վնասակար։ Մնացածը մեզ չի հետաքրքրում։ Մարդկային սովորույթից դուրս, որ ինքներս ենք ստեղծում, չկա ո՛չ մոլորություն, ո՛չ ճշմարտություն, ո՛չ տգեղություն, ո՛չ գեղեցկություն, ո՛չ չարիք, ո՛չ բարիք։ Մեր զգայունակության, անհատական խելքի առաքելությունը դրանք արժևորելն է՝ խորհրդավոր անցումներ որոնելով մեկից դեպի մյուսը։ Սա մեզ թույլ կտա պատկերացում կազմել մեր տքնության շարունակականության մասին՝ դրան առնչվող ամեն ինչը հասկանալու և ընդունելու համար։ Լավագույն միջոցը կլիներ աստիճանաբար կիրառել այն, ինչը կոչում ենք մոլորություն, տգեղություն, չարիք՝ բարձրագույն դաստիարակության տեսակետից, և մեր մեջ հաստատել ներդաշնակություն, որպեսզի տարածենք այն մեր շուրջը։

Ներդաշնակությունը իր նախասկզբնական ամբողջությանը հանգող խորին կանոնավորության օրենքն է, և ձգտումն առ ներդաշնակություն մեզ պարտադրված է ամենաընդհանուր և ամենահրամայական ռեալություններով։ Մեր տեսած ձևերը գոյություն ունեն միայն նրանց իսկ միավորող անցումային շրջաններում, որոնց

միջոցով մարդկային միտքը կարող է հասնել ընդհանուր ակունքին, ինչպես կարող է հետևել կենարար ավշի հոսքին ծաղիկների ու տերևների մեջ՝ հասնելով արմատներին։ Պատկերացրեք մինչև հորիզոնի շրջագիծը փռված մի բնապատկեր. ծառափնջերով խոտածածկ հարթավայր, ծովը հոսող գետ, տներով, գյուղերով եզերված ճանապարհներ, թափառող կենդանիներ, մարդիկ, լուսաթաթախ կամ թխպոտ երկինք։ Մարդիկ սնվում են ծառերի պտուղներով, կենդանիների մսով ու կաթով, հագնում այդ կենդանիների մորթին ու կաշին։ Կենդանիներն ապրում են խոտ ու տերևով։ Իսկ այդ խոտն ու տերևը աճում են ծովերի ու գետերի այն ջրով, որ երկինքն է շաղում նրանց վրա։ Ո՛չ ծնունդ, ո՛չ մահ. հարատև, իրար խառնված կյանք։ Նյութի բոլոր կերպերը ներթափանցված են միմյանց մեջ, ընդհանուր էներգիան հոսում է, ետ քաշվում, ամեն վայրկյան փթթում՝ խամրելու և անվերջանալի կերպարանափոխություններով վերստին ծաղկելու համար։ Գույների, հնչյունների սիմֆոնիաները գրեթե ոչինչ են այն ներքին սիմֆոնիայի գրավչության համեմատ, որ ծնունդ է առել ձևերի շարունակականության մեջ պտտվող ուժերից։ Արվեստագետը գալիս է, ըմբռնում տիեզերական օրենքը և մեզ է վերադարձնում մի կատարյալ աշխարհ, որի բոլոր տարրերը իրենց հիմնական հարաբերություններով մասնակցում են նրա ամբողջական ֆունկցիաների ներդաշնակ իրագործմանը։

Սպենսերը տեսավ միգամածությունից ծնվող մաքուր լուսատուներ, որոնք պնդացան աստիճանաբար, նրանց մակերեսին ջուրը խտացավ, ջրից սկիզբ առավ տարրական կյանքը, դրսևորվեց իր բազմազան կերպերով, օրըստօրե ավելի վեր տարածեց իր ճյուղերն ու շիվերը, պարգևեց պտուղներ, և բացվող գնդաձև ծաղկի նման, որ շուրջբոլորն է սփռելու վարսանդափոշին, աշխարհի սիրտը փթթեց իր բազմազան ձևերի մեջ։ Բայց թվում է՝ տիեզերքի վրա իշխում է դեպի իր ակունքները վերադառնալու մի մութ ձգտում։ Արևից դուրս եկած մոլորակները չեն կարողանում պոկվել նրա ուժի տիրույթներից, ասես կամենում են վերստին սուզվել նրա մեջ։ Հյուլեն ձգտում է հյուլեի, և միևնույն բջջից առաջացած բոլոր կենդանի օրգանիզմները փնտրում են կենդանի օրգանիզմներ, որ տարրալուծվեն նրանց մեջ՝ այդ բջիջը նորից

ստեղծելու համար… Այդպես է և արդարը, երբ գոհանում է ապրելով, այդպես են և գիտնականն ու արվեստագետը, երբ կողք կողքի թափանցում են ձևերի ու զգայությունների աշխարհ, երևակայությամբ պատկերացնում նրա անցած ճանապարհը՝ նախկին համասեռությունից անցնելու համար այսօրվա բազմազանությանը, և հերոսական ճիգով վերստեղծում նախնական ամբողջականությունը։

Ուրեմն, թող արվեստագետը հպարտանա իր լուսավոր ու տառապալից կյանքով։ Այս հույս ավետողների մեջ ամենավսեմ դերը իրենն է։ Ամեն դեպքում նա կարող է նվաճել այն։ Գիտական, հասարակական գործունեությունները ունեն բավականաչափ հստակ նշանակություն ինքնաբավարարման համար։ Արվեստն առնչվում է գիտությանը ձևերի աշխարհի միջոցով, ինչը նրա ստեղծագործության բաղադրյալ տարրն է, նա մտնում է հասարակական ոլորտ՝ դիմելով մեր սիրելու ունակությանը։ Կան մեծ գիտնականներ, որ չգիտեն հուզել, բարի, ազնիվ մարդիկ, որ չգիտեն դատել։ Սակայն չկա արվեստի հերոս, որ միաժամանակ չլինի բանական՝ ինքնադրսևորման դաժան ու դժվարին հաղթանակով, և մարդկային՝ սրտի առումով։ Երբ նա զգում է մինչև քարերի խորախոր շերտերը, իր մեջ ապրող հողն ու տարածությունը և այն ամենը, ինչը շարժվում է, ապրում, նույնիսկ այն, ինչը թվում է մեռած, ինչպե՞ս կարող է չզգալ իր նմանների հույզերը, կրքերն ու տառապանքները։ Իմանա թե չիմանա, ուզի թե չուզի՝ իր գործը համահունչ է երեկվա և վաղվա արվեստագետների գործին և այսօրվա մարդկանց բացահայտում է նրանց տքնության միասնականությունը։ Ժամանակի, տարածության ամեն գործոն հանգում է նրա գործողությանը։ Նրան է պատկանում Հիսուսի, Նյուտոնի և Լամարկի մտքերի միջև դաշնություն հաստատելու առաջնությունը։ Եվ սրա համար է անհրաժեշտ, որ Ֆիդիասն ու Ռեմբրանդտը ճանաչեն միմյանց, և մենք նրանց մեջ ճանաչենք ինքներս մեզ։

* «Ի՞նչ է արվեստը»։

**Բերգսոն, «Ստեղծարար էվոլյուցիա»։